ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Արտակի Սարգսյանի «Անձի սուբյեկտիվ բարեկեցությունը և վստահությունը՝ որպես քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործոններ» թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման/ ԺԹ.00.03. - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ/ ատենախոսության վերաբերյալ:

Հասմիկ Սարգսյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հասարակության մեջ քաղաքական դիրքորոշումներին և դրանք ձևավորող գործոններին:

Քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրությունները ժամանակակից համաշխարհային գործընթացներով պայմանավորված կարևոր են ու արդիական, հատկապես երբ այն միտում ունի ուսումնասիրելու հոգեբանական գիտության տիրույթում: Քանի որ հիմնահարցի քաղաքագիտական մոտեցումները, գրեթե միշտ, կարևորել են սոցիալական և ժողովրդագրական գործոնները, ապա տվյալ աշխատանքում հիմնահարցի քննարկման առարկան առավելապես վերաբերում է դիրքորոշումների կոգնիտիվ և հուզական բաղադրիչներին ու նրանց փոխկապվածության մի շարք հոգեբանական երևույթների հետ, ինչպիսիք են անձի բարեկեցությունը և վստահությունը ինստիտուցիոնալ առումով:

Հեղինակի կողմից իրականացված սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները առավելապես կապված են այն իրողության հետ, որ հասարակության յուրաքանչյուր անդամի քաղաքական դիրքորոշումների ձևավորման վրա որոշակի ազդեցություն են թողնում քաղաքական համակարգի նկատմամբ անձի ունեցած վերաբերմունքի որոշ առանձնահատկություններ, այն է վստահությունը՝ թե՛ անձնային, թե՛ հասարակական մակարդակներում: Այս առումով մեծ դեր ու նշանակություն է ստանում նաև հեղինակի կողմից իրականացրած հետազոտությունները նախընտրական ժամանակաշրջանով պայմանավորված և դրա համեմատությունը ոչ նախընտրական քաղաքական փուլի արդյունքների հետ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ բավարար մշակված և համակարգված չեն քաղաքական դիրքորոշումների էության սահմանները, կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև հստակեցված չեն այն ձևավորող արտաքին ու ներքին գործոնները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել անձի սուբյեկտիվ բարեկեցությունն ու վստահությունը՝ որպես քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործոններ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից (որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է վարկածը, աշխատանքի նպատակը, խնդիրները, ներկայացված են տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները), հիմնախնդրի տեսական վերլուծության երկու գլուխներից (որտեղ մանրակրկիտ տեսական վերլուծության է ենթարկվում քաղաքական դիրքորոշումների դրսևորման օրինաչափությունները, դրանց վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործընթացները, ինչպես նաև բարեկեցության և վստահության ֆենոմենների յուրահատկությունը քաղաքական դիրքորոշումների ձևավորման համատեքստում և այլն), հիմնախնդրի հետազոտական փորձարարական ուսումնասիրման ու վերլուծության մեկ գլխից, որտեղ ամփոփված է հետազոտական լայնածավալ աշխատանքի արդյունքները, եզրակացություններից, որոնք ունեն տրամաբանական հաջորդականություն և տեսականորեն շաղկապված են: Աշխատանքը շարադրված է 139 համակարգչային էջի վրա: Օգտագործված գրականության ցանկը կազմված է 147 գրական աղբյուրներից և ներառում է ինչպես նախկին, այնպես էլ ժամանակակից աղբյուրներ տարբեր լեզուներով, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող աղբյուրները:

Հետազոտության հիմնական արդյունքների հավաստիությունն ապահովվում է օգտագործված տեսական դրույթներով, ընթացիկ և վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով:

Հասմիկ Սարգսյանի աշխատանքը արժեքավորվում է ընտրված հետազոտական բազմաբնույթ մեթոդներով և մեթոդիկաներով: Ատենախոսական աշխատանքի հիմնական ասպեկտը հստակ հիմնավորված է հեղինակի կողմից,

էմպիրիկ հետազոտությունը կազմակերպվել է համաձայն պահանջներին, մեթոդական համալիրը ընտրված է նպատակին և խնդիրներին համապատասխան: Ընդ որում հեղինակի կողմից հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման մեթոդներ՝ հարցարան և թեստավորում: Հարկ է նշել նաև հեղինակի կողմից մշակված հարցարանը՝ քաղաքական դիրքորոշումների բացահայտմանն ուղղված: Վերլուծության մեթոդներ են հանդիսացել բովանդակային վերլուծությունը տեղեկատվության ընդհանրացմամբ և խմբավորմամբ, մաթեմատիկական վիճակագրական վերլուծությունը՝ առաջնային նկարագրական վիճակագրություն (միջին արժեք, դիսպերսիա) և կոռելյացիոն վերլուծություն ըստ Պիրսոնի գծային կոռելյացիոն գործակցի, խմբային համեմատում ըստ Ստյուդենտի գործակցի և այլն:

Էմպիրիկ տվյալների համեմատական վերլուծությունը ստացված տվյալների միջև դուրս բերեց քաղաքական դիրքորոշումների ձևավորման կապվածությունը սուբյեկտիվ բավարարվածության և ինստիտուցիոնալ վստահության միջև: Ստացված արդյունքները թույլ են տվել հեղինակին մշակել քաղաքական դիրքորոշումների ձևավորման կոնցեպտուալ մոդել, որտեղ բարեկեցության կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչները ամուր փոխպայմանավորող կապեր ունեն ինստիտուցիոնալ վստահության հետ, որն էլ կապված է քաղաքական դիրքորոշումների՝ ռացիոնալության և կոնֆորմիզմի հետ, սակայն այդ կապերը ըստ տարիքի և կրթության տարբեր արտահայտվածություն ունեն:

Հետազոտության վերլուծության բոլոր փուլերում հեղինակը ցուցաբերել է բազմակողմանի գիտական հիմնավորումներ հոգեբանության, սոցիալական հոգեբանության ժամանակակից պահանջներին համապատասխան: Տեսական և էմպիրիկ նյութի ընդհանրացման հիման վրա աշխատանքի հիմնական արդյունքները ամփոփվել են եզրակացություններում: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հոդվածներում:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ, որոնք նշված են ստորև.

1. Ատենախոսության տեսական և էմպիրիկ արդյունքները ներկայացված են բավարար գիտական հիմնավորվածությամբ և տրամաբանական հաջորդականությամբ: Միաժամանակ, հետազոտության կիրառական նշանակությունն առավել ընդգծելու նպատակով նպատակահարմար կլիներ ստացված արդյունքների և կատարված վերլուծությունների հիման վրա ձևակերպել գործնական առաջարկություններ, որոնք կարող էին նպաստել հետազոտության արդյունքների ներդրմանը համապատասխան մասնագիտական, սոցիալական և քաղաքական ոլորտներում:
2. Աշխատանքում ներկայացված են նաև նախընտրական քաղաքական ժամանակահատվածին վերաբերող հետազոտական տվյալներ, ինչը, անկասկած, բարձրացնում է ուսումնասիրության արդիականությունը: Սակայն նշված հատվածում ստացված արդյունքների բովանդակային և որակական վերլուծությունը համեմատաբար սահմանափակ է և հիմնականում ներկայացված է ոչ նախընտրական շրջանի տվյալների հետ համեմատության տեսքով: Կարծում ենք, որ նախընտրական շրջանի ուսումնասիրության կազմակերպման առանձնահատկությունների, ընտրանքի բնութագրերի, հետազոտական ընթացակարգերի և ստացված արդյունքների առավել մանրամասն ներկայացումը կհարստացներ աշխատանքի գիտական բովանդակությունը և կուժեղացներ հետազոտական հիմնավորումները:
3. Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է նաև միջանձնային վստահության գործոնը, որի և բարեկեցության բաղադրիչների միջև արձանագրվել են վիճակագրորեն նշանակալի կապեր: Այդուհանդերձ, միջանձնային վստահությունը ներառված չէ քաղաքական դիրքորոշումների ձևավորման առաջարկվող կոնցեպտուալ մոդելում: Մեր կարծիքով, տվյալ գործոնի ներառումը մոդելում կարող էր նպաստել դրա տեսական ամբողջականության և հետազոտական արժեքի բարձրացմանը:

Սակայն վերը նշված դիտողությունները ոչ մի կերպ չեն արժեզրկում ատենախոսության նշանակությունն ու բովանդակությունը: Մեր կարծիքով դրանց

հաշվառումը միայն կնպաստի աշխատանքի համապատասխան ձևակերպմանը և կբարձրացնի վերջինիս արժեքը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հասմիկ Արտակի Սարգսյանի **«Անձի սուբյեկտիվ բարեկեցությունը և վստահությունը՝ որպես քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործոններ»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին և հեղինակը արժանի է հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ն. Ա. Հարությունյան _____

ԵՊՀ գիտ. քարտուղար
Մ. Հովհաննիսյան _____

ք. Երևան ,,22,, հունիս 2026 թ..